



ՀՀ Վանաձորի
համայնքապետարան



«Լոռու տարածաշրջանի
գրոսաշրջության կառավարման
գրասենյակ» ՀԿ

ՓՈՒԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«07» փետրվարի, 2024թ.

ՎԱՆԱՁՈՐ, ԼՈՌԻ ՄԱՐԶ

ՀՀ Վանաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար **Արկադի Փելեշյանի** (այսուհետ՝ Համայնքապետարան), մի կողմից, և «**Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ**» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Լոռու ՏՁԿԳ) , ի դեմս նախագահ **Արփինե Հակոբյանի**, ստորագրեցին փոխգործակցության սույն հուշագիրը առ այն, որ.

1. ՓՈՒԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԵՊԱՏԱԿԸ

ա) Համայնքապետարանը և Լոռու ՏՁԿԳ-ն, նկատի ունենալով Վանաձորում զբոսաշրջության ոլորտի զարգացման համատեղ ջանքերն ու կարևորությունը, արտահայտում են միմյանց հետ համագործակցելու պատրաստակամությունը և ձգտումները՝

- Վանաձոր համայնքի զբոսաշրջային առաջարկի ուժեղացման,
- Վանաձորի առաջխաղացման, գրավչության բարձացման և ներկայացվածության մեծացման,
- Ոլորտային հետազոտություններ իրականացնելու, տեղեկատվության հավաքագրման և վերլուծության,
- ՏԻՄ-մասնավոր շարունակական երկխոսության ապահովման
- Չբոսաշրջային միջավայրի զարգացմանն ուղղված համատեղ նախաձեռնությունների իրագործման
- Հընթացս ձևավորվող այլ ֆորմատների շուրջ համագործակցություն:

բ) Կողմերը պայմանավորվում են համագործակցել սույն հուշագրով սահմանված պահանջներին համապատասխան, Կողմերի համար ընդունելի ձևաչափով՝ հուշագրում նշված նպատակների իրականացման համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած գործառույթների շրջանակներում իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Չբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներում փոխգործակցության, համագործակցային աշխատանքի և փոխօգնության ապահովման:

3. ՓՈՒԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է *հինգ տարի ժամկետով*:
2. Հուշագրի ժամկետը կարող է երկարացվել կողմերի համաձայնությամբ:
3. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե

դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՂԱՏԱՍԻԱԿԱՆՎՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:
2. Հուշագիրը համարվում է կնքված՝ լիազորված մարմնի ղեկավարի կողմից այն ստորագրելուց և հրապարակելուց հետո:
3. Սույն հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) բնօրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

 <p>ՀՀ Վանաձորի համայնքապետարան ՀՀ, Լոռու մարզ, Վանաձոր, Տիգրան Մեծի 22</p> <p>Արկաղի Փելեշյան</p> 	 <p>«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան, Դուռ, 14/8</p> <p>Արփինե Հակոբյան</p> 
---	--